ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Հոկտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում աղոթասացությամբ տեղի ունեցավ Ազգային-եկեղեցական ժողովի հանդիսավոր բացումը:

Ժողովի սկզբում Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի նախագահությամբ կատարվեց ներկաների գրանցում:

Ազգային-եկեղեցական ժողովի բացմանը ներկա էր ՀՀ Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, որը և ընթերցեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի համատեղ ուղերձը:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը ներկայացրեց տեղապահության չորս ամիսների ընթացքում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում կատարված աշխատանքների մասին իր զեկույցը:

Ապա տեղի ունեցավ դիվանի ընտրություն՝ Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի նախագահությամբ: Ազգային-եկեղեցական ժողովի ատենապետ և փոխատենապետ ընտրվեցին ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը և Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդի գործադիր-տնօրեն Եզնիկ-Սիմոն Բալյանը: Կազմվեցին նաև քվեախույզ, առաջարկները բանաձևող և գնահատության հանձնախմբերը:

Այնուհետև Վաչե արքեպիսկոպոսը ծանուցեց կաթողիկոսական թեկնածուների անունները: Ինքնաբացարկներից հետո մնացին երկու թեկնածուներ՝ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Ժամը 14.45-ին սկսվեց պատգամավորների մուտքը դեպի Մայր Տաճար, ուր ժամը 15.30-ին Իջման Սուրբ Սեղանի առջև ի մի եկած պատգամավորները Ամենակարող Աստծու և Սուրբ Ավետարանի առջև երդվեցին ընտրել արժանավորագույնին:

Ժամը 16.00-ին սկսվեց քվեարկությունը: Ժամը 18.30-ին ավարտվեց քվեարկությունը և քվեների հաշվումը: Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան - 263 ձայն,

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան - 176 ձայն,

անվավեր ճանաչվեցին - 11 քվեաթերթիկ:

Այսպիսով, քվեարկության ընդհանուր արդյունքներով Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Ժամը 18.45-ին, ի լուր ամենքի, համայն աշխարհի, ցնծագին, «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի հնչյուններով, բարձր ու հնչեղ ողողանջեցին Մայրավանքի զանգերը՝ ավետելով Հայոց Ընդհանրական Մայր Աթոռի 132-րդ գահակալի ընտրությունը: Ապա բացվեցին Մայր Տաճարի դռները, և նորընտիր Հայրապետն իր հայրական անդրանիկ օրհնությունը բաշխեց հավատացյալ ժողովրդին:

Ցավոք, 132-րդ գահակալի ընտրությունը համընկավ ՀՀ Ազգային Ժողովում տեղի ունեցած արյունալի ողբերգության հետ: Դեռևս չավարտված ողջույնի և երախտիքի խոսքը, Ամենայն Հայոց Հայրապետին լուր տրվեց ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի սպանության մասին: Ուրախությունը մթագնվեց: Նորընտիր Կաթողիկոսը կատարեց հոգեհանգստյան արարողություն՝ մեկ անգամ ևս հավաստելով Հայ Եկեղեցու զորակցությունը հայրենի պետությանը:

Ապա Տ.Տ. ընտրյալ Գարեգին Բ Կաթողիկոսը հանդիսավոր թափորով առաջնորդվեց Վեհարան:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

27.10.99

Խմբագրության կողմից - *Խորհրդանշական կերպով երկու հազարամյակների սահմանագծին ընտրված Գարեգին Բ Հայրապետին մաղթում ենք արևշատություն, արդյունաշատ գահակալություն՝ հաստատուն այն հավատքով, որ Նորին Սրբության իմաստուն դիտապետությամբ Հայ Եկեղեցու 1700-ամյա հոգևոր ժառանգությունը նոր հազարամյակում նորովի կկենսավորվի ու կարժևորվի: Նորին Սրբության երջանկահիշատակ նախորդի՝ Գարեգին Ա Հայրապետի երազանքն էր, որ 1700-ամյակը մի նոր հոգեգալուստ դառնա հայ ժողովրդի համար: Նորընտիր Հայրապետի հոգևոր հովվությամբ նոր հազարամյակում թող իր հայրերի հավատով պայծառակերպվի մեր ժողովուրդը, իր հայրերի նման իր հայրը ճանաչելով Սուրբ Ավետարանը, իսկ մայրը՝ իր հոգևոր ծննդյան Ս. Ավազանը՝ Հայոց Եկեղեցին:*

Մեր շնորհավորանքները միախառնելով կաթողիկոսական ընտրություններից հետո Մայր Աթոռ Ս. Էջմածին ուղղված բազմահարյուր շնորհավորական խոսքերին, այս համարը նվիրում ենք նորընտիր Գարեգին Բ Հայրապետին, իսկ անցնող հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների իրադարձություններին ու եկեղեցական կյանքին կանդրադառնաք հաջորդ՝ դեկտեմբերյան համարում: